# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՝ « Արարատի մարզի Դաշտաքարի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ-ի « **Քիմիա** » / 9 դասաժամ /, «**Ֆիզիկա**» /11 դասաժամ/ , «**Մաթեմատիկա**»/10 դասաժամ/ առարկաների ուսուցչի թափուր տեղի համար:

ՈՒսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողություններին ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր ( հանրակրթական առարկայական ուսումնական ծրագրերին համապատասխան) և հարցազրույց ( մանկավարժական մասնագիտական գործնական հմտություններ):

**Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝**

Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև -1)

1. Բարձրագույն կրթության մանկավարժության որակավորման աստիճանը հավաստող ավարտական փաստաթուղթ (դիպլոմ), կամ վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական կամ ուսուցչական գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժը հաստատող քաղվածք աշխատանքային գրքույկից,
2. Անձնագրի պատճեն,
3. Ինքնակենսագրություն (Ձև -4)
4. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հաստատող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները դրանց առկայության դեպքում
5. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի ,
6. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերն ընդունվում են 2023թ. նոյեմբերի 22-ից դեկտեմբերի 6-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից մինչև 14:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից : Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2023թ. դեկտեմբերի 12- ին, ժամը 12[00] - ին <<Արարատի մարզի Դաշտաքարի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում. հասցեն՝ գ. Դաշտաքար 2-րդ փողոց 2:

**Տեղեկությունների համար զանգահարել ՝ (077) 00 25 86 հեռախոսահամարով:**